

The image shows the front cover of a book. The cover is decorated with a marbled paper pattern, featuring a dense, irregular network of brown, tan, and cream-colored veins. A small, white, octagonal label with a black border is affixed to the lower-left corner of the cover. The label contains the number '27566' printed in a black, sans-serif font. The left edge of the image shows a dark, possibly black, spine or binding material.

27566

2

ՓՈԻՆՁ ՄԻ ԾԱՂԿԱՆՅ

ԱՌ ԱՍՏՈՒԱԾԱՄԱՅՐՆ ՄԱՐԻԱՄ

ՔԱՂԵԼՈՅ

Ի ՇԱՐԱԿՆՈՅԷ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ
1895

4266

ՓՈՒՆԶ ՄԻ ԾԱՂԿԱՆՑ

ԱՌ ԱՍՏՈՒԱԾԱՄԱՅՐՆ ՄԱՐԻԱՄ

ՔԱՂԵԼՈՑ

Ի ՇԱՐԱԿՆՈՑԷ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ճիշացեալ օժանդակութեամբ « Պատմութեան վարդըն
Մարիամնոշ Կոչսարօր Պատուածածնի » հրատարակ-
կելոյ 'ի Հ. Աշքեւնոսիս Գ. Գորգեւեան 'ի Միսի-
րաբեան Ուխտ :



Ի ՍՈՒՐԵ ՂԱԶԱՐ

1895

27566

1778



Աստուածածին անարամայր Տեառն եւ կոյս սուրբ .

Օրհնեալ ըլլաւ որ ուղեցիր ինձ ազդեւ այս փաբրիկ
աշխատութեանս ձեռք զարնելու :

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

Քեզի շնորհուած բոլոր արտօնութեանց , եւ շնորհաց լիութեան , եւ անճառելի փառաց՝ Հիմն եւ կեդրոնն է այդ անհասանելի Աստուածամայրութեան արժանապատուութիւնը , որով երանեն եւ երանեսցեն քեզ ամենայն ազգք . քանզի « Եւ կոյս , փառք քո՝ ծնունդ քո » :

Ուստի կապուելիք փունջին այդ առաջին եւ փառաւոր ծաղիկը քեզ կը նուիրեմ Հայաստանեայց եկեղեցւոյ երրակի ժամամուտներովը :

Հռովմ , 'ի տօնի Ծննդեան սրբոյ Աստուածածնի
1895





ԺԱՄԱՄՈՒՏՔ

Ա. Աստուածածին անհարսնացեալ. զԲանն անբաժնար, կիզբն եւ զԱստուածն անխմանալին ծնար. զանպարազրելին 'ի զիւրկս քո բարձեր, նմա անդա՛շար բարեխօսեա վսան անձանց մերոց:

Բ. Աստուածածին զքեզ խոստովանեալ երկրպագէ եկեղեցի ուղղափառաց, քանզի ուր քերովբէքն բազմաշեպք եւ աթոռք հրանիւթք եւ վեցթեւեան սեւ ըովբէքն նայել ոչ իշխէին, կրեցեր անսերմնապէս յանապականումն 'ի յարգանդի քում՝ որպէս աղախին զՏէր, եւ ծնար որպէս մարդ՝ զԱստուածն բոլորից զմարմնացեալն առ 'ի քէն զանճառ զԲանն, 'ի փրկուելուն աշխարհի եւ կեանք անձանց մերոց:

Գ. Աղաչեմք զքեզ սուրբ կոյս Մարիամ Աստուածածին, Բարձրելոյն զօրութեամբն հովանաւորեալ, եւ սուրբ Հոգւոյն եկաւորութեամբ լուսաւորեալ, որ զամենայն գոյութեանց զստեղծիչն յղացեալ ծնար անճառապէս, մարմնացելոյն առ 'ի քէն բարեխօսեա կեցուցանել զանձինս մեր:

Ա.

Աղաթիչ յանցանաց նախամօրն:

Աթոռ Աստուծոյ Բանին: = Մաքուր աղաւնի, եւ հարսն երկնից՝ Մարիամ, տաճար եւ աթոռ Աստուծոյ Բանին, քեզ երանեն ամենայն ազինք:

Աթոռ փառաց յերկրի սուրբն Մարիամ:

Աթոռ փրկութեան:

Աթոռ քերովբէական: Տես եւ Ամէնօրննալ. — Զեւրովբէական. — Զերովբէից:

Աղախին եւ Մայր կենաց աջոյն ծնող Հօր միածնին, որ առ 'ի քէն մարմնով ընկէց զամբարտաւանն յաթոռոյ, երանեն ազգ եւ ազինք այսօր զծնեալդ 'ի յԱննայէ:

Աղաւնի մաքուր: Տես եւ Մաքուր:

Աղբիւր անապառ լուսոյ:

Աղբիւր եւ ծարաւեաց:

Աղբիւր կենաց բղխեալ յեղեմայ:

Աղբիւր կնքեալ ջրոյն կենդանութեան, զոր ծարաւելոյ բնութեանս ետուր ի յարբումն:

Աղբիւր յորդառատ:

Ամենագովելի եւ քան զերկինս բարձրագոյն, որ զան-
հասանելի զՏէրն յորովայնի քում կրեցեր, եւ
ցնծութիւն աշխարհի ծնար:

Ամենապայծառ բերկրեալ միշտ կոյս: Տես եւ Բերկրեալ:
Ամենասրբուհի: = Առ քեզ ապաւինիմք ամենասրբ-
բունի:

Ամենօրհնեալ աստուածամայր Մարիամ, քերովբէա-
կան աթոռ արարչին մերոյ տնօրէնութեան, զոր
երանեն ամենայն ազինք հանապազ:

Ամենօրհնեալդ 'ի կանայս:

Ամենօրհնեալ սրբուհի:

Ամենօրհնեալ սրբուհի եւ միշտ կոյս Աստուածածին
Մարիամ, բարեխօսեա առ Տէր վասն իմ մե-
ղաւորիս:

Ամպ թեթեւ: = Ետայիսս զքեզ Թեթեւ ամպ ետես
եւ Հայր յամպոյն զքո զորդին իւր դաւանեաց,
նմա յաւէթ յանձն արա զանձինս մեր:

Ամպ թեթեւ, գեղմն իմանալի:

Ամպ թեթեւ լուսածին:

Ամպ թեթեւ լուսաւոր անընդունակ խոնաւութեան,
որ զցօղն կենաց 'ի ցամաքեալ բնութիւնս ցօ-
ղեր, օրհնութեամբ զքեզ բարեբանեալ մեծա-
ցուցանեմք:

Ամպ թեթեւ եւ լուսաւոր:

Ամպ թեթեւ եւ լուսաւոր որ զանձրեւն կենաց 'ի
քեզ հեղեալ 'ի յերկնային ծովէն, զոր հոսեցեր
'ի յերկիր ծարաւուտ, սրովբէական ձայնիւ զքեզ
բարեբանեմք, եւ հոգեւոր երգով մեծացուցանեմք:

Ամպ թեթեւ յերկրային ցանկութեանց սուրբ կոյս, եւ
վառարան աստուածային բոցոյն, որ զցօղն հայ-
րաբուղիս անձրեւեցեր 'ի բանական երկիր, որով
բնութեանս բուսան արդարութեան սուրբ բոյսք:

Ամպ թեթեւ ցօղեալ 'ի մեզ զարդարութիւն, բարե-
բանեմք զբղխեալն 'ի քէն մարմնով յարմատոյն
Յեսեայ, դաւադան ծաղկեալ:

Ամպ լուսածին: = Ուրախացան զօրք երկնից 'ի վե-
րուտ, քանզի ցօղն անապական 'ի քէն հեղեալ
լուսածին ամպ, ծագելով 'ի մեզ զարդարութեան
արեգակն:

Ամպ լուսաւոր: Տես եւ Աստուածածին:

Ամպ լուսեղէն:

Ամպ հովանաւոր:

Ամպ հովանի: Տես եւ Սիւն լուսոյ:

Այգի վայելուչ:

Անապական: = Աղաչանք Աստուածածինն անապա-
կան քում ծնողին, զիմանալի աշս սրտից մե-
րոց բացցես ողորմութեամբ հայել 'ի լոյս քո՝
Քրիստոս: = Զանապական կոյսն Մարիամ Աս-
տուածածին խոստովանի սուրբ եկեղեցի, ուստի
տուաւ հացն անմահութեան եւ բաժակ մեզ ու-
րախարար:

Անապական անարատ կոյս Աստուածամայր:

Անապական եւ միշտ կոյս:

Անապական կոյս:

Անապական տաճար:

Անարատ: = Քաղաքավարեալ 'ի մարմնի անարատ
վարութե, այսօր յառաքելոցն ամփոփեալ՝ վերին
ակնարկութեամբն վերափոխեցար յարքայու-
թիւն Որդւոյ քո եւ Աստուծոյ մերոյ, բարեխօս
խոստովանողացս, զքեզ մեծացուցանեմք:

Անարատ Աստուածածին: = Զանարատն օրհնեցուք
զԱստուածածինն որ կոյս մնաց յետ ծննդեան,
եւ տարաւ յորովայնի զանտանելին ամենեցուն,
զհամբաւակիցն Հօր եւ ամենասուրբ Հոգւոյն:

Անարատ եւ անխախտելի կուսութիւն :

Անարատ կոյս :

Անարատ տաճար անվայրափակ բանին :

Անարատ տաճար Աստուծոյ բանին , որ զնախամօրն
Եւայի զանէծսն բարձեր անճառելի ծննդեամբն 'ի
քէն . առ նա միշտ բարեխօսեա վասն անձանց
մերոց :

Անարատ տաճար , բնակարան անբաւ բանին Աստու-
ծոյ , Մարիամ սուրբ կոյս զքեզ եւ զծնեալն 'ի
քէն մեծացուցանեմք :

Անարատ տաճար տնօրէնութեան : = Անարատ տա-
ճար տնօրէնութեան կոչեցար Հոգւոյն Սրբոյ ,
միշտ կոյս , զքեզ մեծացուցանեմք որ օրհնեալդ
ես 'ի կանայս :

Անարատ : Տես եւ Բարունակ . — Դուռն :

Անրիծ կոյս :

Անբոցակէզ մորենի :

Անդաստան մաքուր 'ի փշոց մեղաց : Տես եւ Երկիր :

Անդաստապարտ շառաւիղ : Տես եւ Ծաղիկ :

Անընդունակ խոնաւութեան : Տես Ամպ թեթեւ լուսաւոր :

Անթառամ ծաղիկ : Տես եւ Ծաղիկ :

Անիծից լուծիչ եւ քաւիչ մեղաց : Տես եւ Լուծիչ :

Անխախտելի : Տես եւ Դուռն :

Անհամեմատ 'ի կանայս :

Անկէզ մորենի :

Անկիզելի մորենի :

Անհաս տնօրէնութեան մայր :

Անհարսնացեալ մայր :

Անհարսնացեալ Մարիամ :

Անհարսնացեալ : = Դուստր լուսոյ , մայր անմարմաւ
ցեալ : Տես եւ Աստուածածին :

Անհարսնացեալ Սրբուհի : = Աստուածածին անմարմ-

նացեալ սրբուհի , զքեզ աղաչեմք անդադար ձայ-
նիւ , որ զէակ Բանն Հօր 'ի քեզ կրեցեր եւ ծնար
անճառապէս , առ նա միշտ բարեխօսեա վասն
անձանց մերոց :

Անճնաւոր տաճար Աստուծոյ բանին :

Անձրեւ կենաց :

Անճառելի լուսոյ մայր :

Անկղբնական բանին Հօր բնակարան :

Անկիզբն բանն Հաճեցաւ առնուլ մարդեղութեամբ
սկիզբն 'ի կուսէդ :

Անտանելի բանին բարձող :

Անտանելւոյն տաղաւար :

Աշտանակ : = Ուրախ լեր սիւն հրեղէն , լուսոյն աշ-
տանակ : = Երկնաբերձ աշտանակ՝ ձոյլ ոսկի :

Ապաւէն : Տես եւ Աստուածածին . — Յոյս :

Ապաւէն մեր եւ յոյս : = Աստուածածին ապաւէն
մեր եւ յոյս , բարեխօսեա առ որդիդ քո միածին ,
զի փրկեսցէ զմեզ 'ի հրոյն տանջանաց եւ պար-
զեւեսցէ մեզ զերկնից արքայութիւնն :

Ապրեցուցիչ Աստուածածին :

Ապրեցուցիչ տապանակ :

Առաջատ անճառ բանին : Տես եւ Բնակարան . —
Խորան . — Տաճար :

Առաջատ անճառելոյ բնակողին :

Առաջատ արարչին :

Առաջատ բնակութեան : = Բանին Հօր մարմնարան
եւ առաքատ բնակութեան , որ կաթամբ կու-
սական կերակրեցեր զէակն Բան :

Առաջատ լուսոյ :

Առաջատ հրափայլ ծաղմամբ :

Առաջատ փեսայացեալ բանին :

Առաւօտ խաղաղութեան :

Աստուածածին ամպ լուսաւոր, որ զցօղն կենաց հե-
ղեր յերկիր բանաւոր եւ զնախամօրն շիջուցեր
պարտեացն զհօւր, անդադար ձայնիւ զքեզ բա-
րեբանեմք եւ հոգեւոր երգով մեծացուցանեմք:

Աստուածածին անարատ կոյս, առ քեզ ապաւինիմք:
Աստուածածին անարատ մայր Տեառն եւ կոյս սուրբ:
Աստուածածին անհարսնացեալ՝ յերկրէ երկնից հարան
ընծայեալ, յորժամ բազմիս լուսոյ նման քո
միաձնիւ յաջակողմեան, յայնժամ մաղթեա ընդ
մեր զնոյն՝ փրկել զմեզ յահեղ բոցոյն, համադա-
սիլ ընդ արդարոցն երգել զիառս ընդ երկնայնոց:

Աստուածածին ապաւէն մեր եւ յոյս:
Աստուածածին եւ կոյս: Տեա եւ Ծաղիկ. — Սլւն. —
Փրկող:

Աստուածածին մայր Բանին: = Սուրբ զԱստուածա-
ծինն օրհնութեամբ մեծացուցանեմք:

Աստուածածին յոյս եւ ապաւէն:
Աստուածածին տիրամայր:
Աստուածամայր եւ կոյս:
Աստուածատունկ խնկարեր ծառ յանուշահոտ բու-
րաստանէն, որ 'ի գնացս Հոգւոյն վտակաց տըն-
կեցար եւ զանմահութեան պտուղն 'ի ժամու-
ետուր մեզ, վասն որոյ ամենեքեան զքեզ մեծա-
ցուցանեմք:

Աստուածորդւոյ մայր:
Ասրն զոր ծանեաւ Գեղէնփն:
Արարողին երկնի եւ երկրի տաճար եւ առագաստ:
Արգանդ կուսին ժուժկալեալ ընդունել զգանձդ երկ-
նային:
Արեւեք արեգականն արդարութեան, եւ նստելոցս
'ի խաւարի լոյս ծագեցեր:
Արեւեք գերարփին:

Արեւեք իմանալի:

Արմատ տնկոյն անմահութեան: = Ի յամուլ երկրէ
այսօր բուսաւ մեզ բարեբեր բոյսն բարի, շու-
շան հովտաց, ծաղիկն դաշտաց, միամայրն Մա-
րիամ՝ արմատ տնկոյն անմահութեան, աղաչա-
նօք սորա խնայեա 'ի մեզ:

Արուսեակ զուարթարար:

Բ

Բաղձալի:

Բանալի: = Փափկութեան դրախտին բացող բա-
նալի:

Բանաւոր: Տեա եւ երկիր. — Տախտակ:

Բանաւոր բարունակ համեղաճաշակ պտղոյն:

Բանաւոր երկիր:

Բանին բարձող:

Բանին բարձող, որ զամենայն կրէ զօրութեամբ:

Բանին Հօր՝ մարմնարան եւ առագաստ բնակութեան:

Բաշխող բարութեանց: — Առ քեզ ապաւինիմք ա-
մենասրբունի, գերադոյն եւ հրաշալի եւ բաշ-
խող բարութեանց, աղբիւր եւ ծարաւեաց եւ
հանգիստ աշխատելոց, եւ եղեր վերընկալ Աս-
տուածային Բանին:

Բարբառեալ անդադար միշտ 'ի վերին զօրաց:

Բարբառեալ եւ կոյս գովեալ, յորմէ Աստուած Բանն
ծնեալ:

Բարբեր: Տեա եւ Բոյս:

Բարբեր բոյսն բարի:

Բարեխօս աշխարհի : = Մայր եւ կոյս աղախին ֆրիստոսի, որ բարեխօսու էս միշտ աշխարհի, քեզ երանեն ամենայն աղինք : Տես եւ Անարատ :

Բարեխօսեա ֆրիստոսի Աստուծոյ մերոյ՝ փրկել զմեզ 'ի փորձութենէ եւ յամենայն վտանգից մերոց :

Բարեխօսութիւն : = (Սիմէոն ալեօքն ծերունին) արտասուելով աղերսէր, արձակեա զիս 'ի խաղաղութիւն՝ անարատ ծնողի քո բարեխօսութեամբ : = Սրբուհւոյ Աստուածածնին բարեխօսութեամբ պարգեւեա երկրպագուացս ամենատուր երրորդութեանդ՝ զյարութիւն յուսոյ կենացն յաւիտենից : = Սրբուհւոյն աղաչանօք հաստատեա զհիմունս Եկեղեցւոյ սրբոյ քո, զի դու ես Տէր, եւ չիք այլ ոք բայց 'ի քէն : = Բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնի պահեցէ զԵկեղեցի իւր սուրբ, եւ 'ի միւսանգամ դաւաժեան իւրոյ նորոգեցէ 'ի փառս : = Բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնի եւ միշտ կուսի աղաչեմ Տէր, փրկեա զիս 'ի յորդայթէ յաներեւոյթ թշնամւոյն : = Բարեխօսութեամբ ծնողի քո եւ միշտ կուսի, հայցեմք 'ի քէն ֆրիստոս փրկիչ աշխարհի, վասն զի բայց 'ի քէն զայլ ոք ոչ զիտեմք մարդասէր :

Բարձող անիծից : = Դու լուծիչ երկանց բարձող աւնիծից : = Զնախնոյ մօրն Եւայի բարձեր զանէծան տրամալի . հայցեա, յորդւոյ քո Միածնի, Հօր հաշտութեանն միջնորդի, բառնալ 'ի մէնջ զխոռովութիւն եւ տալ զոգւոց խաղաղութիւն : = Բարձան անէծքն տրամական քո սուրբ ծնունդեամբ՝ կոյս Մարիամ :

Բարձող անտանելի բանին :

Բարձող երկանց նախամօրն :

Բարձող էիցս բարձողին, որ ծնար զԱստուած մարմնով զանմարմնաբար ծնունդն Հօր : = Զանպարազրելին 'ի զիրկս քո բարձեր : = Զանտանելին 'ի յարգանդի երարձ : = Քրիստոսի բարձող : Տես եւ Նուծիչ :

Բարձող տրամութեան նախամօրն Եւայի :

Բարձրագոյն սերովքէից :

Բարձրագոյն : = Որ քան զերկինս բարձրագոյն Մարիամ պարծանք Եկեղեցւոյ ֆրիստոսի մայր Աստուծոյ մերոյ :

Բարձրելոյն հովանացեալ զօրութեամբ :

Բարունակ : = Համեղաճաշակ պտղոյն բանաւոր բաւրունակ, յորմէ կթեցաւ մեզ ողկոյն անպառ՝ յուրախութիւն տրամեցելոյն 'ի ճաշակմանէ ծառոյն զիտութեան, Սրբուհւոյն անարատ, ամենեքեան զքեզ մեծացուցանեմք :

Բարունակ ծաղկեալ :

Բերկրեալ կոյս Մարիամ : = Ուրախ լեր բերկրեալ քանդի Տէր տերանց է ընդ քեզ : = Ամենապայծառ բերկրեալ միշտ կոյս, որ զանբաւելի զԲանն անճառաբար յղացար, եւ զմարմնացեալն Աստուած ծնանելով 'ի քէն : Տես եւ Ուրախութիւն :

Բղիւսեցեր : = Զհայրածինն բղիւսեցեր զծաղիկ : = Զանապական բողբոջն յաստուածային դրախտէն յորովայն քո տնկեալ բղիւսեցեր յարմատոյն ցեստեայ ծաղիկ վայելուչ կուսական ծննդեամբ . վասն որոյ ամենեքեան զքեզ միշտ մեծացուցանեմք :

Բնակ հրեղէն Աստուածութեանն, յիմանալի զօրացն երանեալ :

Բնակարան անբաւ Բանին Աստուծոյ :

Բնակարան անկղքնական Բանին Հօր :

Բնակարան անակզբնակից Որդւոյն : = Անակզբնական
Բանին Հօր բնակարան :

Բնակարան Աստուածութեան :

Բնակարան Աստուածութեան քո սուրբ կոյսն Մարիամ :

Բնակարան աստուածային ներմարդութեան : Տես եւ
Փրկող :

Բնակարան Բանին :

Բնակարան Բանին Աստուծոյ :

Բնակարան եկաւորութեան :

Բնակարան եւ առաքաւտ արարչին :

Բնակարան Հոգւոյն սրբոյ :

Բնակարան Միածնի Որդւոյ քո :

Բնակարան սուրբ Հոգւոյն, որով ծնար զԲանն Աս-
տուած, բարեխօսեա վասն մեր Աստուածածին
Մարիամ :

Բնակարան տնօրէնութեան :

Բոլորից փրկութեան մայր :

Բոյս բարի եւ բարեբեր : = Ի յամուլ երկրէ այսօր
բուսաւ մեզ բարեբեր բոյսն բարի, շուշան հով-
տաց, ծաղիկն դաշտաց, միամայրն Մարիամ,
արմատ տնկոյն անմահութեան : Տես եւ Երկիր :

Բուրաստան նորատունկ :

Գ

Գանձ անապական : = Գանձ անապական գտար սուրբ
Աստուածածին, բարեխօսեա Քրիստոսի Աստուծոյ
մերոյ կեցուցանել զանձինս մեր :

Գանձ կենաց աստուածային :

Գանձի կենաց, աստուածային ձայնիւ ցնծութեամբ
մեծացուցանեմք :

Գաւազան ծաղկեալ յարմատոյն Յեսեայ :

Գեղ մարգարտափայլ :

Գեղմն ընդունիլ զցօղն երկնային, յորմէ հոսեաց
անձրեւն կենաց եւ բղխեաց աշխարհի աղբիւրն
իմաստից :

Գեղմն իմանալի : = Ուրախ լեր ամպ թեթեւ գեղմն
իմանալի, որ 'ի բանական երկիր հեղեր զանձ-
րեւ կենաց՝ արդիւնս ընդ գործոյ հաւատոյ պըտ-
ղաբերեալ :

Գեղմն իմանալի զոր ետես Գեղէոն :

Գերագոյն երկնից խորան եւ առաքաւտ :

Գերագոյն եւ հրաշալի եւ բաշխող բարութեանց :

Գերագոյն սրբութեամբ եւ կուսական մաքրութեամբ,
բարձեր զանհասն բնութեամբ 'ի գիրկս քո սնըն-
դեամբ : = Առաքելոյն հովանացեալ ամպ լուսե-
ղէն, գերագոյն քեզ Հոգւոյն սրբոյ եւ զօրու-
թիւն Բարձրելոյն հովանաւորեալ սուրբ Աստուա-
ծածին, օրհնութեամբ զքեզ մեծացուցանեմք :

Գերագոյն քերովբէից :

Գերահրաշ ծաղիկ բուրեալ յԵղեմայ :

Գերապայծառ մաքրեալ հոգի :

Գիրկ : = Որ էից լուսոյն արժանի եղեր բառնալոյ
'ի քո գիրկս, եւ արեգական արդարութեան եւ
ղեր արեւելք : Տես եւ Գերագոյն . — Դուծիլ . —
Կաթմ :

Գրաւական կենաց մարդկան Մարիամ Աստուածա-
մայր :

Դ

Գառնաճաշակ պտղոյն քաղցրացուցիչ:

Գոռն երկնային զոր ետեան Եզեկիէլ:

Գոռն երկնից, զծագումն անճառելի անապական որ
'ի Հօրէ առաքեցաւ, 'ի դիրկս քո բարձեալ կրե-
ցեր՝ դիեցուցանելով մարմնացելոյն 'ի քէն զկու-
սական քո սուրբ զկաթն:

Գոռն ընդ որ եմուտ Բանն Աստուած:

Գոռն կնքեալ զոր մարգարէն ետես:

Գոռն փակեալ՝ զքեզ Եզեկիէլ յառաջագոյն ծանոյց
կոյս անարատ, ընդ որ եմուտ անտեսն յէից՝
Բանն անմարմին որ 'ի Հօրէ եւ ել մարմնով՝
անխախտելի մնալով կուսութեանդ, հոգեւոր եր-
զով զքեզ միշտ մեծացուցանեմք:

Գոռն փակեալ ընդ որ ոչ ոք մտեալ, բայց Տէր Աս-
տուած Իսրայելի:

Գոռտը Դաւթի թագաւորի:

Գոռտը Դաւթի ծնանի զՈրդին Աստուծոյ:

Գոռտը լուսոյ:

Դրախտ աստուածային:

Դրախտ աստուածային եւ Արեւելք իմանալի:

Ե

Եկեղեցի, որդւոյ քո Աստուածածին զքեզ խոստովանի:

Երանեալ 'ի կանայս:

Երանեալ յամենայն ազգաց՝ սրբուհի եւ կոյս Մարիամ:

Երանելիդ ամենեցուն:

Երգարանեալ: = Որ 'ի զօրաց հոգեղինաց երգա-
բանի սրբուհին, զծնեալն այսօր օրինօք բնու-
թեան զմայրն Աստուծոյ Բանին 'ի վեր քան
զբնութիւնս, բարձր արարէք զծնեալն այսօր
զմայր մաքուր Բանին զմիշտ կոյսն:

Երկին վեհագոյն, քրովբէ հոգեղէն:

Երկինք պայծառ:

Երկիր բանաւոր արեգական օթարան:

Երկիր վայրափակ յորում՝ լոյսն ազանիցի: = Բա-
նաւոր երկիր՝ Տիրուհի, եւ անդաստան մաքուր
'ի փշոց մեղաց, որ զրոյսն երկնային առանց
սերման ծնար, որով զկենացն ետուր զհաց սո-
վեալ բնութեանս:

Երկնաբերձ աշտանակ ձոյլ ոսկի:

Երկնային դռան:

Երկրպագեալ յանմարմնական զօրաց:

Երջանիկ կոյս:

Եօթնարփեան շնորհաց Հոգւոյն ընդունարան:


Զ

Զանապական կոյսն Մարիամ Աստուածածին խոստո-
վանի սուրբ Եկեղեցի, ուստի տուաւ հացն ան-
մահութեան եւ բաժակ մեզ ուրախարար:

Զուգաթիւ աւուրց դարուցս անցաւորաց:

Զքեզ ունիմք բարեխօս՝ կոյս անհարսնացեալ, մայր
անարատ Էմմանուէլի, տաճար Բանին Հօրն երկ-
նաւորի. օրհնութեամբ զքեզ մեծացուցանեմք:

Զօրութեամբ բարձրելոյն հովանաւորեալ:



8125
27566

է

Էին աթոռ :

Ը

Ընդունարան եօթնարփին շնորհացն : Տես եւ Ծաղիկ :

Ընդունող Բանին Աստուծոյ :

Ընդունող լուսոյ :

Ընծայել : = Որ զպտուղն 'ի քէն կենաց ընծայեցեր մեռեալն Ադամայ :

Ընտրեալ յառաջ քան զհիմունս աշխարհի :

Ընտրեալ յառաջ քան զհիմունս 'ի սկզբանէ աշխարհի :

Թ

Թարգման աստուածութեան : = Անճառելիդ Աստուած անգնական 'ի հրեղինաց , այսօր հաճեցար 'ի հողեղինաց յայտնել Թարգման աստուածութեանդ քո զմիշտ կոյսն Մարիամ :

Ի

Ի բարեխօսութիւն փութացիր մեզ սուրբ Աստուածածին՝ առ 'ի փրկել զժողովուրդս 'ի մեղաց եւ յապկանութենէ :

Ի բարձրութիւնս երկնից բարձր բանիւք բարբերանիս Սրբուհի :

Ի Լիբանանէ դիմեալ հարսն :

Իմանալի արեւելք :

Իմանալի բանաւոր տախտակ օրինաց : Տես եւ Տախտակ :

Իմանալի լոյս :

Ի քեզ բովանդակ կրեցեր զհուր աստուածութեանն՝ Մարիամ մայր եւ կոյս , օրհնութեամբ զքեզ մեծացուցանեմք :

Ի քեզ եմք ապաւինեալ ամէնօրհնեալ Սրբուհի , լեր բարեխօս անդադար վասն մերոյ փրկութեան :

Ի քէն ցնծութիւն ծնաւ տիեզերաց նախայաւիտեան Բանն :

Լ

Լայնածաւալ տեղի : = Անպարագիծ էին բոլորից բնութեանց լայնածաւալ տեղի :

Լեռն վիմաժին :

Լի մանանայիլ :

Լոյս : = Նստելոցս 'ի խաւարի լոյս ծագեցեր : = Զլոյսն անասուեր յարգանդի կրեցեր : = Լոյսն որ ոչ բովանդակի , 'ի քէն մարմնով պարունակի :

Լոյս , լուսոյ մայր :

Լուծիչ : = Անիծից լուծիչ եւ քաւիչ մեղաց սուրբ կոյս , որ զանտանելին յէից 'ի գիրկս քո բարձեր :

Լուծիչ երկանց Եւայի :

Լուծիչ երկանց : = Որ զնախամօրն անիծից երկանց լուծեր զգատակնիք : = Որ զգատակնիք երկանց անիծից նախամօրն ելոյժ՝ միածնի Որդւոյ քո ծննդեամբ կոյսն Մարիամ , այսօր յառաջին յանպատում փառսն դարձուցեր սովաւ զնախաստեղծն , զոր միշտ ունիմք բարեխօս առ քեզ՝ Տէր Աստուած հարցն մերոց :

Լուսաւորեալ : = Սուրբ Հոգւոյն եկաւորութեամբն լուսաւորեալ :

Լուսեղէն տաճար Աստուծոյ Բանին :

Լուսոյ մայր եւ կոյս :

Լուսոյն աշտանակ :

Խ

Խարխիս յուսոյ հաստատութեան զուգաթիւ առուրց
դարուցս անցաւորաց, օրհնութեամբ երգով եւ
կեղեցիք տիեզերաց այսօր տօնեն զյիշատակ
ծննդեան քո 'ի մօրէ :

Խորանայարկ կամարանման յօրինեցար սուրբ կոյս
Աստուածածին, զանհասանելի զԲանն Աստուած
բնաւորապէս անսերմնաբար կրեցեր 'ի քում յու
րովայնի :

Խորան եղեր Հոգւոյն սրբոյ :

Խորան եւ տաճար Աստուծոյ Բանին : = Առ քեզ ա-
պաւինիմք խորան եւ տաճար Աստուծոյ Բանին
Մարիամ մայր եւ կոյս, բարեխօսեա առ Քրիս-
տոս վասն անձանց մերոց :

Խորան լուսոյ :

Խորան լուսոյ անվայրափակ արփւոյն կենաց : = Գե-
րագոյն երկնից ցուցար խորան եւ առաքաստ :

Խորան Հոգւոյն սրբոյ :

Խորան սրբութեան :

Խորհուրդ խորին անքնին, ծածկեալ յազգաց յաւի-
տենին :

Խորհուրդ կենաց եւ մայր կենդանութեան եւ առա-
գաստ հրափայլ ծագմամբ, մայր եւ աղախին,
մեծացուցանեմք :

Խորհրդաւոր խորան Բանին Հօր բարձրելոյ :

Ծ

Ծագող արեղականն արդարութեան :

Ծագող լուսոյն :

Ծագումն արեւու լուսոյն ձմարտի, որով հերքեաւ
խաւարն առաջին :

Ծաղիկ : = Անթառամ Ծաղիկ, անդատապարտ շա-
ռաւիղ, վերաբուսեալ յարմատոյն ցեասեայ, զքեզ
Եսայիաս կանխաւ վերագոչեաց եօթնարփին
շնորհաց Հոգւոյն ընդունարան գոլ. Աստուածա-
ծին եւ կոյս, զքեզ մեծացուցանեմք : = Գերահրաշ
Ծաղիկ բուրեալ յեղեմայ :

Ծաղիկ անթառամ տոհմի սեռիս մարդկութեան :

Ծաղիկն դաշտաց միամայրն Մարիամ :

Ծառ կենաց անմահական պտղոյն :

Ծառ կենաց Տիրուհի, որ ետուր մարդկան 'ի ժամու
պտուղ զհացն կենաց զիջեալն 'ի յերկնից, բա-
րեխօսեա Սրբուհի վասն անձանց մերոց :

Ծառ կենաց որ զանմահութեան պտուղն ետուր :

Ծառ կենաց որ զանմահութեան պտուղն 'ի քէն եւ
տուր նախնոյ մօրն Եւայի, 'ի մահաբեր երկանցն
աղատելով, բարեխօսեա առ Տէր վասն մերոյ
փրկութեան :

Ծառ կենաց տնկեալ յադին սուրբ կոյս, որ զհայրա-
ծինն բղխեցեր զծաղիկ, եւ ետուր 'ի ժամու
զՈրդին պտուղ մարդկան, զորոյ զմարմինն ճա-
շակեալ անմահացաք յուսով, վասն որոյ օրհնա-
բանեմք զքեզ յաւուր քո ծննդեան :

Ծիրանազգեաց : Տես եւ Մարգարտատեսիլ :

Ծնանել : = ԶԱստուածն անիմանալին ծնար : = Զամենայն գոյութեանց զստեղծիչն յղացեալ ծնար անճառապէս : = Ծնար որպէս մարդ զԱստուածն բոլորից զմարմնացեալն առ 'ի քէն զանճառ զԲանն' 'ի փրկութիւն աշխարհի եւ կեանք անճանց մեբոց : = Զբոյսն երկնային առանց սերման ծնար : = Ուրախ լեր եւ բերկրեա մայր եւ կոյս, քանզի ծնեալն 'ի կուսէդ այսօր վերստին յարութեամբ ծնաւ 'ի կոյս գերեզմանէն : = Յորմէ կենդանաստեղծեալք յանեղէն հաստեցան ամենայն եղակաճքս, անսերմապէս տղայացաւ յորովայնի քում, եւ ծնաւ առ 'ի քէն մարմնացեալ Աստուածն բոլորից : = Ծնեալն 'ի քէն 'ի խաչ ելեալ եւ 'ի յաթոռ փառաց ընդ Հօր. անարգեալ 'ի մարդկանէ փառատրութեամբ, էութեամբ երկրպագեալ : = Զարարչակից Բանն գոյացեալ ստուգապէս աշխարհի ծնար : = Զանմայր ծնեալն առաջին՝ ծնար անհայր յերկրորդին : = Որ զհօւրն Աստուած յորովայնի քում ընկալար, եւ ծնար անճառապէս զկենսագործողն ամենեցուն, բարեխօս զքեզ ունիմք որ երանեալդ ես 'ի կանայս :

Ծնող արարչին :

Ծնող եւ աղախին Տեառն :

Ծնունդ անարատ :

Ծնունդ : = Գերագոյն այսօր շնորհիւ փայլեալ ցուցեր ծննդեամբ զմայր Միածնիդ քո ընտրելոյ : Մարդասիրեալ անօրինաբար 'ի յԱննայէ արկեր հիմունա նորոյ աշխարհի : = Որ բարձրացոյց զանկեալ բնութիւնս 'ի քէն ծննդեամբ Որդին յերկինս, զկարօտեալքս ելից հացիւ եւ զմեծատունն ելոյծ ունայն. երանեն ազգ եւ ազինք այսօր զծնեալդ 'ի յԱննայէ :

Կ

Կաթն : = Յորմէ զարհուրեալ դողային դառք վերին զուարթնոցն, տղայապէս առննկալեալ բարձեր 'ի գիրկս, եւ արբուցեր որպէս մայր ստացողին զքեզ զկուսական քո սուրբ զկամն : = Կերալրողին տիեզերաց արբուցեր զքո սուրբ զկամն, որ զննջեցեալսն մեր վերստին նորոգէ, զքեզ մեծացուցանեմք որ օրհնեալդ ես 'ի կանայս :

Կատարումն մարգարէից : = Զքեզ կատարումն մարգարէից կուսական քո ծննդեամբ՝ որով բնութեանս քակտեցան օրէնք, հրաբուն սեռիցն փոխադրեալ 'ի լուսաճեմ խորանն :

Կենարար Բանին բնակարան :

Կենդանի տապանակ կտակարանաց նորոյ ուխտի : Տես եւ Տապանակ :

Կոյս : = Անսկիզբն Բանն յանսկզբնական 'ի Հօրէ եւ սկզբնաւորեալ 'ի կուսէն մարմնոյ զգեցմամբ, բովանդակելով յորովայնի եւ ընդ Հօր գոլով, եւ սաՀմանեալ ժամանակաւ ծնեալ լինի Աստուած եւ մարդ : = Քեզ միայնոյ մօր եւ կուսի մաղթեմք հայցելով 'ի քէն, բարեխօսեա անդադար առ որդիդ քո եւ Աստուած մեր՝ փրկել զմեզ 'ի փորձութենէ եւ յամենայն վտանգից մերոց : Տես եւ Դուռն. — հարսն. — Վէմ :

Կոյս ամենասուրբ :

Կոյս անապական :

Կոյս անարատ :

Կոյս անհարմնացեալ, մայր անարատ Էմմանուէլի :

Կոյս, Աստուածորդւոյ մայր :

Կոյս բերկրեալ :

Կոյս երջանիկ :

Կոյս եւ մայր եւ բնակարան աստուածային ներմար-
դութեան :

Կոյս յետ ծննդեան :

Կոյս սուրբ :

Կոյս սրբուհի :

Կուսին նախնոյ մօրն Եւայի՝ բարձան անէծքն տըրտ-
մական քո սուրբ ծննդեամբ, Կոյս Մարիամ :

Կուսութեանց մայր :

Կուսութեանց զարմանք :

Կուսութիւն անխախտելի :

Կուսութիւն յետ ծննդեան մնալով անապական :

Կրել : = Զանչէլ հուր Աստուածութեանն 'ի քեզ տա-
րեալ կրեցեր, որով բնութեանս կիզեալ շիջաւ
կրից բոց : = Որ զանհասանելի զՏէրն յորովայնի
քում կրեցեր : = Կրեցեր անսերմնապէս յանա-
պականումն 'ի յարգանդի քում որպէս աղախին
զՏէր : = Ի քեզ կրեցեր զհուր Աստուածութեանն :
= Որ զԲանն Աստուած անսերմն յղութեամբ
յարգանդի կրեցեր : = Որ զանտանելին յէից
'ի յարգանդի անապականաբար կրեցեր, ուրախ
լեր անհարսնացեալ մայր :

Հ

Համեղաճաշակ պտղոյն բանաւոր բարունակ :

Հանգիստ աշխատելոց :

Հանդիսարան : = Մարգարէից հանդիսարան :

Հարսն : = Հարսն երկնից Մարիամ : = Հարսն երկ-
նաւոր, մայր եւ յետ ծննդեան մնալով կոյս : =
Յնժա եւ զուարճացիր հարսն 'ի յերկրէ երկնից,
քանզի այսօր երկնայնոցն իջեալ տային քեզ զա-
ւետիս յարութեան Միածնի Որդւոյ քո : = Ի
Լիբանանէ դիմեալ հարսն զքեցեալ այսօր զա-
րեգական արկեալ զքեւ, եւ ընդ ոտիւք զլուսինն
ստուերատեսակ : Տես եւ Վէմ :

Հարսն անփորձ :

Հարսն երկնային, կոյս անապական :

Հարսն երկնից :

Հարսն ընծայեալ յերկինս :

Հիմն Եկեղեցւոյ :

Հիմն եղեր Եկեղեցւոյ :

Հոգւոյն զքեւ հովանացեալ միայն Սրբուհի, ծնար
զԲանն Աստուած զանճառելոյ Հօր ծնունդ, եւ
յայտնեցաւ միութիւն Երրորդութեան :

Հոգւոյն սրբոյ տուն եւ տաճար :

Հոգանիւթեայ տաճար փառաց :

Հովանաւորեալ : = Բարձրելոյն զօրութեամբն հովա-
նաւորեալ : = Որ 'ի լրումն անճառից 'ի քէն
մաքրելոյ երջանիկ կուսին Հօր զօրութիւն հո-
վանաւորեալ : Տես եւ Գերազոյն :

Հոտ անմահութեան ծննդոցս Եւայի :

Հրաշագեղ ծնեալ 'ի յԱննայէ :

Հրաշափառագոյն կոյս : Տես եւ Մարգարատեսիլ :

Ձ

Ձոյլ ոսկի : Տես եւ Աշտուանի :

Ճ

Ճանապարհ արքայութեան :

Ճեմարան բանին Աստուծոյ :

Ճշմարիտ արեւելք արեւգականն արդարութեան :

Մ

Մայր անարատ :

Մայր անարատ անհայր ծննդեան :

Մայր անարատ էմմանուէլի :

Մայր անհարսնացեալ :

Մայր անճառ լուսոյ, Մարիամ սուրբ Աստուածածին,
քանզի 'ի քեզ կրեցեր զհուր Աստուածութեանն,
լուսեղէն տաճար Աստուծոյ բանին :

Մայր անճառ լուսոյն :

Մայր անտանելոյն :

Մայր Աստուածորդւոյ :

Մայր Աստուծոյ :

Մայր բանին :

Մայր բանին ծնող :

Մայր բանին տնտեսութեան :

Մայր եւ աղախին փրկչին մերոյ :

Մայր եւ բնակարան Աստուածութեան :

Մայր եւ կոյս, աղախին Քրիստոսի, որ բարեխօս եւ
միշտ աշխարհի :

Մայր եւ յետ ծննդեան մնալով կոյս :

Մայր էմմանուէլի :

Մայր լուսոյ եւ առաքատ Աստուծոյ բանին :

Մայր լուսոյ Մարիամ :

Մայր խաչեցելոյն :

Մայր կենաց :

Մայր կենդանութեան :

Մայր կուսութեամբ : = Եկեղեցի Որդւոյ քո Աստուած-
ածինն քեզ խոտովանի, որ միայն կուսութեամբ
եւ մայր :

Մայր կուսութեանց :

Մայր հաստատութեան մարդկան :

Մայր մաքուր բանին :

Մայր Միածնին :

Մայր սուրբ անարատ լուսոյն :

Մայր սուրբ սքանչելի լուսոյն, որ զԱստուածն ամե-
նայն յաւիտեանց յորովայնի քում կրեցեր, եւ
ցնծութիւն աշխարհի ծնար զբանն Աստուած, ա-
ղաչեմք : Մայր սուրբ բարեխօսեա :

Մայր ստեղծողին :

Մայր վերածգողին :

Մայր Տեառն :

Մայր տնօրէնութեան :

Մայր փրկութեան :

Մայր Փրկչին :

Մայր Քրիստոսի :

Մայր : = Լուսոյ մայր եւ կոյս : = Զանհաս տնօրէ-
նութեան մայր : = Զբոլորից փրկութեան մայր,
որ զանտանելին յէից 'ի յարգանդի երարծ : =
Զքեզ ոչ միայն որդիք մարդկան՝ այլ եւ վերին
զօրութիւնք, դասք անմարմնոց հոգեղինաց հրե-

զինաց զուարթնոց եւ հրեշտակաց գոհաբանեն
եւ վերօրհնեն եւ փառաւորեն զմայր եւ զաղա-
խին Փրկչին մերոյ: = Մայր եւ կոյս եւ աղա-
խին Քրիստոսի: = Զանձառելի լուսոյ մայր: =
Մայր անարատ անհայր ծննդեան քո 'ի յերկրի:
Տես եւ Մարիամ:

Մարգարէից հանդիսարան, եւ գրաւական կենաց
մարդկան Մարիամ Աստուածամայր:

Մարգարիտ լուսափայլ, Հոգւոյն սրբոյ տուն եւ տա-
ճար:

Մարգարտատեսիլ եւ ծիրանազգեաց հրաշափառագոյն
կոյս:

Մարիամ: = Մարիամ Աստուածամայր: = Մայր Աս-
տուծոյ Մարիամ: = Որ եկիր 'ի փրկութիւն
մարդկան ծննդեամբ կուսին Մարիամիւ, աղա-
չանօք մօր քո կեցո զմեզ Փրկիչ: = Մայր լուսոյն
Մարիամ անհարսնացեալ, օրհնեալք 'ի կանայս:
= Որ 'ի վեր քան զքերովբէսն երեւեցար Աս-
տուածածին Մարիամ, տանելով յորովայնի զա-
նիմանալի զբնութիւնն, բարեխօսեա առ Տէր
վասն մերոյ փրկութեան: Տես եւ Բոյս. — Սէր:
— Տախտակ. — Տաճար:

Մարմնարան Բանին Հօր:

Մաքուր աղանի:

Մաքուր եւ ամբիժ կոյս յետ ծննդեան, որ մարմնով
ծնար զարձակողն 'ի կապից մահու, բարեխօս
լեր վասն անձանց մերոց՝ փրկել 'ի սպառնա-
լեաց գեհենոյն:

Մաքուր ծնող փեսայի:

Միածնի որդւոյ բնակարան:

Միամայր Մարիամ:

Միայն կուսութեանց մայր:

Միայն օրհնեալ Արքուհիք 'ի կանայս, բնակարան
եւ առաքատ արարչին, բարեխօսեա առ Տէր
վասն անձանց մերոց, զի փրկեցէ զմեզ 'ի սպառ-
նալեաց գեհենոյն:

Միայն օրհնեալք 'ի կանայս, մայր եւ միշտ կոյս եւ
խմանալի լոյս, ծնող արարչին մերոյ, անդադար
բարեբանեսցուք:

Միայնոյ քեզ 'ի կանայս կոյս յետ ծննդեան երգեմք
զօրհնութիւն, զի լոյս 'ի լուսոյ քեւ յայտնեցաւ
աշխարհի, եւ զնախամօրն եբարձ զանէծս՝ ան-
ճառ ծննդեամբ 'ի քէն:

Միջնորդ Աստուծոյ եւ մարդկան:

Միջնորդ եղեր Աստուծոյ եւ մարդկան:

Միջնորդ օրինաց եւ շնորհաց:

Մորենի անբոցակէզ:

Մորենի անկէզ:

Մորենի անկիզելի:

Մորենի: = Մորենի անկիզելի, որ զանչէջ հուր Աս-
տուածութեան 'ի քեզ տարեալ կրեցեր, որով
բնութեանս կիզեալ շիջաւ կրից բոց: = Այսօր
բուսաւ յԱննայէ մորենիս Մարիամ՝ յոր վառե-
ցաւ հուրն աստուածային, զոր ետես Մովսէս
զօրինակ կուսին 'ի Սինա լցեալ լուսովն անմա-
տոյց: = Անբոցակէզ մորենի: = Զքեզ մորենի
անկէզ, լեառն վիմածին, դուռն փակեալ եւ աղ-
բիւր կիզեալ, նախատեսացն գուշակեալ մայր եւ
կոյս, հոգեւոր երգով զքեզ բարեբանեմք եւ փա-
ռաւորեմք զՄիածին քո զՈրդին: Տես եւ Սրովբէ:
Մորենի վառեալ որ ոչ այրէր:

3

Յարուցելոյն 'ի մեռելոց բնակարան մայր եւ կոյս :
 Յերկրէ յերկինս հարսն ընծայեալ :
 Յղանալ : = Զբանն անակիղքն յղացար :
 Յղութիւն անսերմնական, ծնունդ անարատ, կուսու-
 թիւն յետ ծննդեան մնալով անապական :
 Յոյս եւ ապաւէն խոստովանողացս զքեզ :
 Յոյս եւ փրկութեան Մայր :
 Յոյս հաստատութեան :
 Յոյս հաստատութեան մարդկան :
 Յոյս մեր եւ ապաւէն մայր Տեառն եւ կոյս սուրբ, որ
 հուր Աստուածութեանն ոչ բոցակիղեաց զքո սուրբ
 զորովայն, բարեխօսեա առ Տէր վստն մերոյ
 փրկութեան :
 Յոյս : Տես եւ Աստուածածինն :

Ն

Նախամօր երկանց բարձող :
 Նախատեղծին ծնունդ :
 Նախատեսացն գուշակեալ մայր եւ կոյս :
 Նազապետացն Աբրահամու, Իսահակայ եւ Յակովբայ
 պարգեւեցար 'ի յԱստուծոյ կոյս Մարիամ դուստր
 նոցին :
 Նիւթեղէն Սրովբէ :
 Նմանող երկնից :

Նորատունկ բուրաստան :
 Նոր խառնարան հրաշալի նոր խառնման :
 Նոր խորան արեգական արդարութեան :
 Նորոգող : = Ստեղծողին մայր, եւ հնութեան կերպի
 նորոգողին, քեզ երանիցեն ազգ եւ ազինք ամե-
 նայն :
 Նոր տաճար անճառ լուսոյն :

Շ

Շառաւիղ օրհնութեան նախնոյ ծնողին մեր բնու-
 թեան : = Անդատապարտ շառաւիղ : Տես եւ
 Ծաղիկ :
 Շիջեցանել : = Զնախամօրն շիջուցեր պարտեացն
 զհուր :
 Շնորհ աշխարհի :
 Շուշան հովտաց, ծաղիկն դաշտաց միամայրն Մարիամ :

Ո

Որովայն : = Ծնունդն Հօր եւ հինաւուրց, անժամա-
 նակն յաւիտենից՝ ժամանակաւ յորովայնի քում
 բնակեցաւ եւ 'ի Հօրէ ոչ մեկնեցաւ : = Որ տա-
 րար յորովայնի զանտանելին ամենեցուն եւ ծնար
 անճառապէս զՔրիստոս յոյս ազգի մարդկան, առ
 նա միշտ բարեխօսեա կեցուցանել զմեզ : =
 Զծնեալն յամենասուրբ յորովայնէ, յանարատ
 'ի կուսէն օրհնեցէք եւ բարձր արարէք զնա յա-
 ւիտեան : Տես եւ Պարագրիլ . — Տամել :

Որում երկինք եւ երկիր ոչ բաւէին տանել լուսոյն,
բնակարան բնութեան Բանին սպասաւորեցեր,
աղաչեա վասն մեր զՄիածին քո զՈրդիդ:

Ուրախացիր՝ բարձրելոյն հովանացեալ զօրութեամբ
եւ բնակարան սուրբ Հոգւոյն՝ որով ծնար զԲանն
Աստուած. բարեխօսեա վասն մեր Աստուածածին
Մարիամ:

Ուրախութիւն աշխարհի:

Ուրախութիւն երկնի եւ երկրի:

Ուրախութիւն Հրեշտակաց:

Ուրախութիւն արամեցեւոյ բնութեանս՝ բերկրեալ
կոյս Մարիամ, զոր ողջունարեր աւետեօք կրեցեր
զառնողն 'ի քեզ զօրէնս ողջունի, առ նա միշտ
բարեխօսեա վասն անձանց մերոց:

Պ

Պայծառ երկինք:

Պայծառ քան զարփի փայլեալ սրբոյ կուսին հոգի:

Պայծառ քան զերկինս:

Պայծառագոյն: = Որ քան զարեգակն պայծառագոյն
Մարիամ, մի՛ դադարեր բարեխօսել վասն մեր
Քրիստոսի մայր Աստուծոյ մերոյ:

Պարագրիլ: = Ծագեալ լոյսն 'ի Հօրէ բնութեանց
էից անտանելին պարագրեցալ 'ի քում յորո-
վայնի: = Անտանելին 'ի համայնից բովանդա-
կիչ բնութեանց բոլորից, պարագրի աշօր մար-
դասիրապէս յորովայնի անարատ կուսին, զոր
առ Տէր ունիմք բարեխօս վասն անձանց մերոց:
Տես եւ Տաճար:

Պարգեւ բնութեանս:

Պարծանք ազգի մարդկան:

Պարծանք Եկեղեցւոյ:

Պարծանք կուսութեանց:

Պարտէզ փակեալ, աստուածատունկ Եդեմ:

Պարտէզ փակեալ, աստուածատունկ Եդեմ, որ եւ
ծառն կենաց 'ի մէջ դրախտի քո 'ի Հոգւոյն
տնկեալ, անմահական պտղովն ելից զտիեզերս.
սրովբեական ձայնիւ գրեզ բարերանեմք եւ հո-
գեւոր երգով մեծացուցանեմք:

Պսակ կուսից Տիրամայր:

Ս

Սափոր ոսկեղէն:

Սափոր ոսկի:

Սափոր ոսկի երկնային հացին:

Սափոր ոսկի երկնային մանանային: = Սափոր ոս-
կեղէն լի մանանայիւ:

Սերովբէ հողեղէն:

Սէր: = Սիրոյ անմահ փեսային եղեր դու մայր՝ Մա-
րիամ:

Սիւն լուսոյ, ամպ հովանաւոր եւ բնակարան Բանին՝
որ բանիւ հովուէր զԽաղալէ:

Սիւն լուսոյ եւ ամպ հովանի սուրբ կոյս, որ ցօղե-
ցեր 'ի մեզ զցօղն երկնային, գրեզ բարերանեմք
Աստուածածին կոյս:

Սիւն հրեղէն, լուսոյն աշտանակ:

Սուրբ սրբոց:

Սպասաւոր անհասութեան խորհրդոյն:

Սպասաւոր անձառելի ծննդեան :

Սպասաւոր խորհրդոյ անձառելի ծննդեան Տեառն :

Սպասաւորեալ 'ի հրեշտակաց :

Սպասաւորեալ 'ի սերովբէից :

Ստեղծողին մայր եւ հնութեան կերպի նորոգողին :

Սրբուհի մայր եւ կոյս եւ աղախին ֆրիստոսի , բարեխօսեա առ Տէր վասն մերոյ փրկութեան : = Որ 'ի բարձրութիւնս երկնից բարձր բանիւք բարեբանիս Սրբուհի , 'ի Լիբանանէ դիմեալ եւ այլն : Տես եւ Հարսն :

Սրբուհի մայր ֆրիստոսի :

Սրբուհի Մարիամ՝ սափոր ոսկի :

Սրովբէ : = Սնկէզ մորենի եւ սրովբէ հողեղէն՝ սուրբ կոյս , քանդի պտուղն կենաց 'ի քէն տուաւ մեզ : = Սյգի վայելուչ , սրովբէ հողեղէն : = Նիւթեղէն սրովբէ : = Սերովբէ հողեղէն վեհագոյն քերովբէից :

Վ

Վայելչապէս ծնար զԱստուած :

Վառարան աստուածային բոցոյն : Տես եւ Ամու :

Վեհագոյն սերովբէից եւ բազմաչեայ քերովբէից՝ տիւրամայր Աստուածածին :

Վերափոխեալ զքեզ 'ի յերկնային խորանն այսօր Որդին քո Միածին , ուստի եւ դասք առաքելոցն եւ իմաստուն սուրբ կուսանացն միաձայնելով գովէին զքեզ մայր անհարմանացեալ , հոգեւոր երգով զքեզ միշտ մեծացուցանեմք :

Վերընկալ աստուածային Բանին :

Վերօրհնեալ 'ի սրովբէից :

Վերօրհնեալ յամենայն առաքելական քարոզութեանցն :

Վէմ : = Ի լեռնէ վէմն առանց ձեռին հատեալ՝ Գանիէլ զուշակեաց զանսերմն ծնունդ քո , հարսն երկնաւոր , մայրեւ յետ ծննդեան մնալով կոյս :

Վիճակեալք տեսանողացն ձայնի : = Յիմանալի վտակաց տանն Աստուծոյ հոմանց , վիճակեալք տեսանողացն ձայնի արբամբ զմայլեցար :

Տ

Տախտակ : = Իմանալի բանաւոր տախտակ անարաւ մազբելի տառիցն մովսիսական օրինացն , որ զԱստուածն ամենեցուն իսկապէս մարմնով 'ի գերկս քո բարձեր՝ Մարիամ , ներբողական ձայնիւ եղանակեմք քեզ զերգս օրհնութեան , ամենօրհնեալք 'ի կանայս :

Տաղաւար արբազամեան աստուածընկալ :

Տաղաւար : = Անտանեւոյն տաղաւար :

Տաղաւար Հոգւոյն :

Տաճար անապական Բանին Հօր :

Տաճար անեղ Բանին :

Տաճար անխախտելի :

Տաճար անարատ :

Տաճար Բանին Աստուծոյ :

Տաճար եւ առաքատ արարողին երկնի եւ երկրի :

Տաճար ընդհանուր լուսոյն :

Տաճար լուսոյ անստուերին :

Տաճար լուսոյ մայր :

Տաճար մաքրեալ յորում ստեղծողն էից բազմեալ :
 Տաճար սրբութեան անճառ լուսոյն :
 Տաճար սքանչելի արդարութեամբ, եւ դուռն երկնային :
 Տաճար : = Տաճար եւ առաքատ, տեղի անտանելի
 լուսոյն : = Տաճար լուսոյ՝ որ մարմնով պարա-
 գրեալ անճառաբար ծնար զԲանն Աստուած : =
 Անճնաւոր տաճար Աստուծոյ Բանին : = Տաճար
 Բանին Հօրն երկնաւորի, օրհնութեամբ զքեզ
 մեծացուցանեմք : = Տաճար եւ քաղաք շինեալ,
 բարձօղ անուանդ քում բարձրելոյ : = Տաճար
 երկնաւոր արքային : = Լուսեղէն տաճար Աս-
 տուծոյ Բանին : = Անարատ տաճար անվայրա-
 փակ Բանին Աստուծոյ՝ Մարիամ սուրբ կոյս :
 Տանել : = Յարգանդի տարար զանտանելին ամենե-
 ցուն : = Որ 'ի վեր քան զքերովբէսն երեւեցար
 Աստուածածին Մարիամ, տմնելով յորովայնի
 զանխմանալի զբնութիւնն, բարեխօսեա առ Տէր
 փսն մերոյ փրկութեան :
 Տապանակ աստուածային ուխտի կտակարանաց :
 Տապանակ ապրեցուցիչ :
 Տապանակ կտակարանաց :
 Տապանակ կտակի :
 Տապանակ կտակի Բանին :
 Տապանակ : = Կենդանի տապանակ կտակարանաց
 նորոյ ուխտիս, որով եղբ յերկիր աւետեաց հոր-
 դեալ Հոգւով 'ի քեզ տալաւրեալ Բանին :
 Տեղափոխեալ 'ի վերնական 'ի կառս քերովբէականս՝
 Աստուածամայր :
 Տեղի անտանելի Բանին :
 Տեղի անտանելի լուսոյն :
 Տեղի իջման :
 Տեղի հանգստեան փառաց անեղիդ :

Տեղի : = Յարմարեցեր տեղի իջման անճառելի խո-
 նարհութեամբ 'ի յօդ հանդարտ զօրինակեալն
 Մարիամ : Տես եւ Տաճար :
 Տեղի անօրէնութեան : = Որ 'ի կանուխ ժամանա-
 կաց ստորագրեցեր զանօրէնութեան քո զտեղի :
 Տենչալի :
 Տիրամայր Աստուածածին :
 Տիրամայր Սրբուհի կոյս :
 Տիրուհի՝ անարատ մայր Տեառն եւ կոյս Մարիամ :
 Տես եւ Օրոհնարանեալ :
 Տղայանալ : Տես եւ Ծնանել :
 Տղայապէս : Տես եւ Կաթն :
 Տումար անճառ անքնին :
 Տուն եւ տաճար Հոգւոյն Սրբոյ :
 Տուն անօրէնութեան : = Բարունոյ Բանին տուն
 տնօրէնութեան :

8

Յանկալի զուարթնոցն :
 Յանկալի կուսից :
 Յաւագին մայր Տեառն :
 Յօղ : = Զցօղն կենաց հեղեր յերկիր բանաւոր : =
 Զցօղն հայրաբուղիս անձրեւեցեր 'ի բանական
 երկիր : Տես եւ Ամպ . — Գեղմմ . — Սիւն :
 Յօղ քացրածաւալ՝ ցանկալի զուարթնոցն :
 Յօղէր արտօսը ցաւագին մայր Տեառն որ կայր մերձ
 առ խաչին, յորժամ լսէր զծարաւին բարբառե-
 լոյ իւր Միածնին :

Փ

Փայլեալ: == Որպէս գերարփի փայլեալ, ահեղիցն նմանեալ հրեղինաց դատուցն, Վասն որոյ հըրճուողական ձայնիւ քեզ երգէ Եկեղեցի սուրբ զնոր զօրհնաբանութիւն: == Պայծառ քան զարփի փայլեալ սրբոյ կուսին հոգի:

Փառաւորեալ եւ օրհնեալ միշտ սուրբ կոյս Աստուածածին Մարիամ մայր Քրիստոսի, մատո զաղաւանս մեր Որդւոյ քո եւ Աստուծոյ մերոյ:

Փառաւորեալ ընդ Միածնին հրճուողական ձայնիւ երգոց:

Փափկութեան դրախտին բացող բանալի:

Փրկող կենդանութեան ազգի մարդկան: == Զքեզ՝ կոյս եւ մայր եւ բնակարան Աստուածային ներմարդութեան, զոհարանեմք եւ վերօրհնեմք զեղեալ փրկող կենդանութեան ազգի մարդկան, Վասն որոյ զքեզ Աստուածածին եւ կոյս՝ բարեբանեմք, զմայր եւ զաղախին Փրկչին մերոյ:

Ք

Քաղաք: Տես եւ Տաճար:

Քաղաքաւարեալ 'ի մարմնի անարատ վարուք:

Քաղցրացուցիչ դառնաճաշակ պտղոյն:

Քան զարեգակն պայծառագոյն Մարիամ:

Քան զերկինս բարձրագոյն:

Քաւիչ մեղաց, լուծիչ յանցանաց:

Քերովբէական աթոռ ցուցար Աստուածածին, 'ի գիրկս բառնալով զԱստուածն ամենեցուն՝ որ նստին 'ի քերովբէս:

Քերովբէական թեւօք պարածածկեցար՝ սրբուհի Աստուածածին, կոյս եւ մայր եւ բնակարան Աստուածութեանն, վերօրհնեալ յամենայն առաքելական քարոզութեանցն:

Քերովբէից գերագոյն էին աթոռ:

Քեւ բացու սրովբէափակ դուռն դրախտին:

Քեւ լուծան կնիք դատապարտութեան:

Քեւ կանգնեցաւ մեղուցեալ մայրն գլորեալ:

Քեւ հաճեցան իմանալիքն ընդ հոգեղէնքս:

Քեւ մերձեցաք 'ի փայտն կենաց: == (Քեւ) բնուութեանս բուսան արդարութեան սուրբ բոյսք:

Քեւ տուաւ մեզ փայտն անմահութեան:

Քրիստոսի բարձող:

Քրիստոսի մայր Աստուծոյ մերոյ:

Քրովբէական աթոռ արարչին մերոյ:

Քրովբէական աթոռ զքեզ տեսաք 'ի յերկրի:

Քրովբէ հոգեղէն:

Օ

Օգնական եւ շնորհ աշխարհի:

Օթարան արեգական:

Օթարան լուսածին:

Օրհնաբանեալ տիրուհի: == Որ 'ի դասուց մարդարէից եւ յերջանիկ առաքելոցն օրհնաբանեալ Տիրուհին զլուծիչ երկանցն Եւայի զմայրն կենաց ծնեալն այսօր 'ի յԱննայէ. բարձր արարէք զծնեալն այսօր զմայր մարութն Բանին զմիշտ կոյսն:

Օրհնեալ եւ ամենօրհնեալ 'ի կանայս:

Օրհնեալ եւ կոյս տաճար մաքրեալ:

Օրհնեալ 'ի կանայս:

Օրհնիչ Եւայի:

Ի բաշխել փոքրիկ փնջի ծաղկանցս՝ պաղատանօք
հայցեմ 'ի մայրագութ սրտէդ ընդ Հայաստանեայց
եկեղեցւոյ :

« Աստուածածին անարատ մայր Տեառն եւ կոյս
սուրբ, բարեխօսեա առ որդիդ քո Միածին, զի փր-
կեսցէ զմեզ 'ի սպառնալեաց զեհէնոյն, եւ պարգե-
ւեսցէ մեզ զերկնից արքայութիւնն, եւ հանգուցէ
զհոգիս մեր ննջեցելոցն : Օգնեա եւ ինձ Քրիստոս
այսօր յառաջին ճանապարհին, եւ 'ի միւսանգամ
գալստեանդ քո օգնեա ինձ » :

Եւ եւս ,

« Աղաչեա վասն մեր զառ 'ի քէն զմարմնացեալն
Աստուած, զի միաբանեսցէ զեկեղեցի իւր սուրբ՝ շի-
նեալ 'ի վերայ հիման առաքելոց եւ մարգարէից,
պահել անարատ մինչեւ յօր երեւելոյ գալստեան իւ-
րոյ, աղաչեմք :

Մայր սուրբ, բարեխօսեա » :



ԳԵՅՈՒԿ
ՄԱՏԵՆ

10
6

ՄԸ Հայագիտական գրադարան



MAL024516

